ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՐՊ ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արաբկիրի թիվ 37 փողոցն անվանակոչել հայ դերասան, ռեժիսոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Կարպ Խաչվանքյանի անվամբ՝ «Կարպ Խաչվանքյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՐՊ ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դերասան, ռեժիսոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Կարպ (Կարապետ) Մկրտչի Խաչվանքյանը ծնվել է 1923 թվականի հունվարի 23-ին Վրաստանում, Ախալցխա քաղաքում:

1928 թվականին նրա ընտանիքը տեղափոխվել է Թիֆլիս:

1941-1944 թվականներին սովորել է Թբիլիսիի կինոստուդիային կից դերասանական դպրոցում:

1944-1998 թվականներին աշխատել է Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնում:

1984-1988 թվականներին Կարպ Խաչվանքյանը նաև թատրոնի գեղարվեստական ղեկավարն էր, որտեղ նա բեմադրել էր Արտեմի Այվազյանի «Սեր աստղերի տակ», Էլդար Ռյազանովի և Էմիլ Բրագինսկու «Բաղնիքդ անուշ» ու այլ կատակերգություններ:

Խաչվանքյանը հատկապես հայտնի է կատակերգական ժանրում իր խաղացած դերերով: 20-րդ դարի երկրորդ կեսի հայ բեմի ամենաճանաչված կատակերգակներից է: Բեմական հմայքի, շեշտված անհատականության, ռիթմի, հումորի, երաժշտության նուրբ զգացողության շնորհիվ կերտել է և՛ կատակերգական, և՛ երաժշտական կերպարներ:

Կարպը նկարահանվել է նաև կինոյում. 1949 թվականին՝ «Արարատյան դաշտի աղջիկը», 1956 թվականին՝ «Պատվի համար», 1963 թվականին՝ Լեոնիդ Ենգիբարյանի՝ «Ճանապարհ դեպի կրկես», 1981 թվականին՝ «Ատամնաբույժն արևելյան»:

1983 թվականին հանդիսատեսը սիրեց նաև «Տաքս-Տաքսի» կատակերգությունը, որտեղ նա խաղում էր Կնյազի դերում:

1998 թվականին պարգևատրվել է ՀՀ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով:

Կարպ Խաչվանքյանը մահացել է 1998 թվականի նոյեմբերի 23-ին Երևանում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՐՊ ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Կարպ Խաչվանքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՐՊ ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Կարպ Խաչվանքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ